ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՏԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Արարատի մարզ, գ. Ոսկետափ, Հ.Աբեղյան 1
Հեռ.6-30-15,
էլ.հասցե-vosketapigyuxapetaran@mail.ru

N 179
21 նոյեմբերի 2016թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊՐՆ. Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգարժան պրն. մարզպետ,

Կից ներկայացվում է Ոսկետափ համայնքի ավագանու 14.11.2016թ.-ի թիվ 19,20 -Ն,21-Ն 22,23,24,25-Ն,26-Ն որոշումների կրկնօրինակները:

Առդիր 14/ տասնչորս/թերթ:

ՀԱՄՅԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 19

14նոյեմբերի 2016 թ.

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

Ավագանին որոշում է

Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետևյալ հաջորդականությամբ՝

1.Նիստի օրակարգը հաստատելու մասին

/զեկ. Ս.Աբրահամյան/

2.Համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին

/զեկ. Ս.Աբրահամյան

3.Բյուջեի հոդվածների փոփոխություն կատարելու մասին

/զեկ. Ս.Աբրահամյան

4..2016թ բյուջեի կատարողականի հաղորդման մասին 14.11.2016թ-ի դրությամբ

/զեկ. Ս.Աբրահամյան/

5.Ոսկետափ համայնքում 2017թ-ի տեղական տուրքերի նվճարների ,դրույքաչափերի հաստատման մասին /զեկ. Ս.Աբրահամյան

6 2017 թ-ի մանկապարտեզ հաճախող երեխաների վարձավճարի մասին.

/զեկ. Ս.Աբրահամյան

7.Ոսկետափ համայնքի ղեկավարի 2017թ վարձատրության չափի ,համայնքապետարանի աշխատակազմի և մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակի,հաստիքացուցակի և պաշտոնական դրույքաչափերի հաստատման մասին
/զեկ. Ս.Աբրահամյան /

7.Համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կազման և կառավարման խորհուրդ ստեղծելու մասին

/զեկ. Ս.Աբրահամյան/

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ

Մեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՏԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-20-Ն

14 նոյեմբերի2016թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել Ոսկետափ համայնքի ավագանու կանոնակարգը սույն օրենքի պահանջներին համապատասխան (հավելված 1):

Տոնոյան Յուրա	կողմ
Հովակիմյան Վարթեր	կողմ
Բարսեղյան Գեղամ	կողմ
Մեյրանյան Լուսինե	կողմ
Հովհաննիսյան Նաիրի	կողմ
Հայրապետյան Արկադյա	կողմ
Մարտիրոսյան Ալեքսան	կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 21-Ն

14 նոյեմբերի 2016թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

Ավագանին որոշում է

1. Պահուստային ֆոնդը պակասեցնել 1700.0 հազար դրամ:
2. Կառավարման մարմնի պահպանում (01.1.1.51)ծրագրի 4264 հոդվածը ավելացնել 200.0հազար դրամով
3. Սոցիալական արտոնություններ (10.7.1.54) ծրագրի 4726 հոդվածը ավելացնել 500.0 հազար դրամ և 4729 հոդվածը ավելացել 1000.0հազար դրամ :

Տոնոյան Յուրա	կողմ
Հովակիմյան Վարթեր	կողմ
Բարսեղյան Գեղամ	կողմ
Սեյրանյան Լուսինե	կողմ
Հովհաննիսյան Նաիրի	կողմ
Հայրապետյան Արկադյա	կողմ
Մարտիրոսյան Ալեքսան	կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 22

14նոյեմբերի 2016թ.

ՈՒՄԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ 14.11.2016թ-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

Ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի 2016թ. բյուջեի եկամուտների կատարողականը 14..11.2016թ. հետևյալ կերպ՝

	Պլան	Փաստացի	Կատարողական %
Հողի հարկ	18150.0	13103.0	72.1
Գույքահարկ	10087.0	9522.0	94.3
Հողի վարձավճար	3507.0	3420	97.5
Տեղական տուրք	906.0	1010.0	111.4
Մուտքավճար,աղբի վճար/	4120.0	3012.0	73.1
Ընդամենը	36770.0	30067.0	81.7

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Մեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 23-Ն

14նոյեմբերի2016թ.

ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հաշվի առնելով արված առաջարկությունները և փոփոխությունները.

Ավագանին որոշում է

Հաստատել 2017թ.-ի տեղական տուրքի և վճարների չափաբաժինները ըստ առանձին տեսակի:

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքեր, շինություններ ներառյալ ոչ հիմնական շինարարության (տեղացման համար) տեղական տուրք սահմանել հիմնական օբյեկտների համար՝

1) Մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 դրամ,

անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար սահմանել 10000 դրամ:

2)Սույն կետի 1)ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

2.1)201-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ

2.2)501-ից մինչև 1000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000դրամ

2.3)1001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝35000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3)Մինչև 20քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝3000դրամ

4)20քմ. և ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝5000դրամ

2.Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացած փոփոխություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ սահմանել 2000 դրամ:

2) Բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի, գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության , ապա բացի սույն կետի1)-ինենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով:

3) Նախատեսվում է միայն կցակառույցների ,վերակառույցների, շենքի, գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝5000դրամ:1-ին, 2-րդ և 3-րդ կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ :

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 3000դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000դրամ:

5.Համայնքի տարածքում.

1)Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝10 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար սահմանել՝ 150 000դրամ:

3) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30 000 դրամ:

4)Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել 3000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում սահմանել 1000 դրամ :

6.Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման համար օբյեկտների, բաղնիքների (սաունաների), խաղատների ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար.

1)Առևտրի օբյեկտների համար՝25 000դրամ

2)Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000դրամ

3)Բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000դրամ

4)Խաղատների կազմակերպման համար՝ 500 000դրամ

5)Շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000դրամ

6)Վիճակախաղերի կազմակերպման համար՝100 000դրամ

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ տեղական տուրք սահմանել .

1)Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքի՝2000դրամ:

ա. ըստ ծավալի 1 խոր.մետր աղբի համար՝ 1000 դրամ կամ

բ. ըստ զանգվածի՝ 1 տոննա աղբի համար՝ 1000 դրամ

3) Իրավաբանական անձանց, առևտրի հասարակական, կենցաղային սպասարկման կետերի համար սահմանել ամսական 500դրամ

4) Աղբահանության վճարի արտոնություն տալ 4 և ավել անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին 100%-ի չափով և վճարումը կատարել համայնքի բյուջեից:

5)Համայնքի տարածքում աղբահանությունը իրականացնել շաբաթը մեկ անգամ:

Տոնոյան Յուրա	կողմ
Հովակիմյան Վարթեր	կողմ
Բարսեղյան Գեղամ	կողմ
Մեյրանյան Լուսինե	կողմ
Հովհաննիսյան Նաիրի	կողմ
Հայրապետյան Արկադյա	կողմ
Մարտիրոսյան Ալեքսան	կողմ

Կողմ-7 դեմ-0 ձեռն -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՏԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 24

14 նոյեմբերի 2016թ.

2017Թ. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 19 կետով.

Ավագանին որոշում է

2017թ. համար մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի ծնողական գումար սահմանել ամսական 4000 դրամ,իսկ մանկապարտեզ հաճախող սոցիալապես անապահով ընտանիքի երկու և ավել երեխաներից յուրաքանչյուրի համար սահմանել 3000 դրամ:

Տոնոյան Յուրա	կողմ	
Հովակիմյան Վարթեր	կողմ	
Բարսեղյան Գեղամ	կողմ	
Մեյրանյան Լուսինե	կողմ	
Հովհաննիսյան Նաիրի	կողմ	
Հայրապետյան Արկադյա	կողմ	
Մարտիրոսյան Ալեքսան	կողմ	

Կողմ-7 դեմ-0 ձեռն -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 25-Ն

14նոյեմբերի2016թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, 32-րդ հոդվածի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով.

Ավագանին որոշում է

Սահմանել 2017թ.-ի Ոսկետափի համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի և մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը համաձայան հավելվածների:

Հավելված 1

1.Համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը՝ 18

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		330 000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	216000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար/1.2.1/	1	216000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3.1/	1	202000
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1.1/	1	125000
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1.2/	1	125 000

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2.1/	1	120 000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3.1/	1	115 000

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/
Հարկահավաք	1	115000
Ավագ օպերատոր	1	115000
Օպերատոր	1	100000
Գործավար	1	80000

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Պարետ	1	115000
Պահակ	1	80000
Հավաքարար	1	90000

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Մշակույթ իտան վարիչ	1	85000
Գրադարանի վարիչ	1	85000
Գրադարանավարուհի	1	80000

Հավելված2

3.Մանկապարտեզի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշոնային դրույքաչափերը

Մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը՝22

Մ/Մանկապարտեզիտնօրեն	1	160000
Դաստիարակ	3.75	130000
Դայակ	3.3	83000
Խոհարար	1.0	90 000
Տնտեսվար	0.5	90 000
Խոհարարիօգնական	0.5	90 000
Մանկապարտեզիհաշվապահ	0.5	90 000
Գանձապահ	0.5	90 000
Երաժշտությանուսուցչուհի	0,75	130000
Դերձակօժ. բանվոր	0,75	100 000
Բուժքույր	1.0	90 000
Դռնապահ,այգեպան	1.0	90 000
Լվացքարար	1,0	83000
Պահակ	1,5	90 000
Հնոցապան	1,0	83 000
Գործավար	0.5	90 000

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Մեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ

Դեմ -0 Չեռնպահ -0

Կողմ -7

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 26

14նոյեմբերի 2016թ.

ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով՝

ավագանին որոշում է

1.Ստեղծել **Ոսկետափհամայնքիղեկավարինկից,համայնքի** զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1.**Ոսկետափհամայնքիղեկավարիտեղակալ**՝ Արսենքոլյան-խորհրդի նախագահ

2.**Ոսկետափի համայնքապետարանի** աշխատակազմի քարտուղար՝ ԿարինեԱվդալյան-խորհրդիքարտուղար

3. **Ոսկետափի համայնքապետարանի** աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Կառլեն Ղազարյան-խորհրդի անդամ

4. **Ոսկետափ համայնքի** ավագանու անդամ՝ Յուրա Տոնոյան–խորհրդի անդամ

5. **Ոսկետափ համայնքի** ավագանու անդամ՝ ԳեղամԲարսեղյան-խորհրդի անդամ

6. **Ոսկետափ** համայնքի բնակիչ՝ Անահիտ Ղազարյան-խորհրդի անդամ

7. **Ոսկետափ** համայնքի բնակիչ՝ ՀովիկՄկրտչյան- խորհրդի անդամ

8. **Ոսկետափ** համայնքի բնակիչ՝ ԹորգոմՊետրոսյան- խորհրդի անդամ

9. Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմի ներկայացուցիչ՝ Նաիրի Հովհաննիսյան-խորհրդի անդամ ,ավագանու անդամ

2. Խորհրդին՝գործունեությունը իրականացնե լհամայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 14ի համայնքի ղեկավարին կից, «**Ոսկետափ** համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 26 որոշմամբ սահմանված կարգով:

Տոնոյան Յուրա	կողմ
Հովակիմյան Վարթեր	կողմ
Բարսեղյան Գեղամ	կողմ
Սեյրանյան Լուսինե	կողմ
Հովհաննիսյան Նաիրի	կողմ
Հայրապետյան Արկադյա	կողմ
Մարտիրոսյան Ալեքսան	կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ